

# ՀԱՅՐԵՆԻՔ

Գ Ե Ի Ե Ռ Ե Կ Ե Ն

Լ Բ Ա Գ Ի Ր

Ամեն երեքշաբթի օրերը կը հրատարակուի: Պոստը համար 50 քուոց գինն է 2 արծար Մեծիս կանխիկ: քրատարուքեան ծախսը բաժանորդաց վրայ: Իսկ գաւառաց համար 2 1/2 արծար Մեծիս: Մանուգման տողը 2 գրչ:

Գաւառաց քրատարի ծախսը բաժանորդաց չ'վերաբերիր: Լրագրոյս վերաբերակ ուր է. Բ գրութիւն ուղղելի առ Տեղեկութեամբ Մ. Յ. Մեկիքեան ի Կ. Պոլիս Զիւմպիլի խան վերնախարկ քիւ 10:

## ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏԻՐԱԿԱՆ

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգային ժողովն ուրբաթ օրն իստ ըրաւ ի Ղալաթի ընդ նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Առանեան վըսեմ. Ստեփան փաշայի:

Նախ Տիվրիկից ազգայնոց մէկ աղերսագիրը կարդացուեցաւ, որ Տիվրիկի առաջնորդական խնդրոյն տարտամ մնալուն և Տիվրիկի վարժարանաց ի նպաստ 150 տարի առաջ հաստատուած կտակաց բնկերութեան մը Տիվրիկի ազգային ժողովոց իրաւասութեան ներքեւ չը դուրս ելուն համար պարզապէս բողոք մ'էր ընդդէմ ազգային վարչութեան: Ժողովը որոշեց սոյն աղերսագիրը վարչութեան յղել ի բացատրութիւն:

Յետոյ կտակաց գործադրութեան և անտէր որոց ժառանգական խնդրոցն զբաղեցաւ ժողովը:

Յանձնաժողովոյ ծրագրին վրայ քանի մը երեսփոխանք կարեւոր դիտողութիւններ ըրին. այս միջոցին քանի մը մանրամասն քննութեանց համար նիստը դադարեց ընել որոշուելով, ունկնդիր ժողովուրդը դուրս ելաւ և ծրագրին վրայ վիճարանութիւնը շարունակուելով, որոշուեցաւ Յանձնաժողովոյ անդամաց վրայ քանի մը հոգի ևս աւելցնել հարկ եղած բարեփոխութիւններն ընելով Բ. Ի. Երան ներկայացնելու համար:

Ասկէ վերջը ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմանէ ներկայացեալ առաջարկութիւնքը քննելու պաշտօն ունեցող Յանձնաժողովոյ որոշած քանի մը խնդրոց տեղեկագիրը կարդացուելով, տեղեկագրին մէջ մի խնդրոց եղբակցութիւնն ընդունուեցաւ և որոշուեցաւ թէ:

Ա. Սահմանադրութեան գործադրութիւնը դիւրացնելու համար վարչութեանց կողմանէ շինուած հըրահանգները կրնան գործադրուիլ վարչութեան պատասխանատուութեանը ներքեւ առանց Ազգ. ժողովոյ վաւերացմանը եւ թակալ ըլլալու:

Բ. Գաւառական Հրահանգին 5, 12, 15 և 17րդ յօդուածները որոց դէմ բողոք բարձած է Սպարթալեան փոքրաթիւ կուսակցութիւնը, սահմանադրութեան ամենեւին հակառակ չեն:

Գ. Պաշտօնական երթևեկութեանց ծախսը հոգալու համար տարեկան 300 վրայի վարկ մը բանալ առաջարկուած ըլլալով Յանձնաժողովին կողմանէ, ժողովը դիտեց որ կեդրոնականը դատարկ ըլլալով սոյն

խնդրոյն ստիպողականութիւնը զանազան դժուարութեանց կենթարկի. ուստի վսեմ. ատենապետ փաշայի առաջարկութեամբ որոշուեցաւ որ Ազգ. երեսփոխանք յառաջիկայ սահմանադրական տարւոյն համար ունեցած ազգ. տուրքերն ին մարտ ամսոյ մէջ վճարեն, անույ պաշտօնական երթևեկութեանց ծախսերն հոգալու համար:

Առանց զողուեցաւ ժամը 10ին յաջորդ նիստը 15 օրէն ընելու որոշմամբ:

Ազգային ժողովոյ սոյն որոշման վրայ տարակոյս չունիմք որ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ըստ իւր խոստման պիտի բարեհաճի միանգամ ընդմիջ վերջացնել իր վրի խնդիրը, երեսփոխանական ժողովոյ դուրսբերումը հրամայել տալով և Ազգ. դիւանատան տօմարները յԱռաջնորդարան վերագարծնելով:

Իսկ Ն. բարբը սրբազնութիւնը ամբաստանելու յանդգնող Սպարթալեան համախոհք կարծէ որ արժանաւոր պատիւ մ'ընդունին ի խըրատ և յօրինակ այլոց, ինչպէս առաջարկութիւն եղաւ Ազգային ժողովոյ մէջ:

### ՄԱՍԻՍԻ ՊԱՊԱՆՁՈՒՄԸ

Մասիսի շարաթ աւուր թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք. «Առեփայն խորհրդի նախ թէ սահմանադրութեան գործադրութեան համար վարչութեան կողմէ շինուած Հրահանգներն իր բացատրութիւն օրինաց' գործադրելի են վարչութեան պատասխանատուութեանը ներքեւ առանց Ազգային ժողովոյ վաւերացման անպարտաւերելու ելուելու»: Բ. որչեց որ դաւառական Հրահանգին այն քանի մը յօդուածներն որոց դէմ իր վրի ազգայնոց մէկ մասը կը բողոքէ իր բեհայանահամարումն, սահմանադրութեան համապատասխանող յօդուածոց հակառակ չեն մը չսանին»:

1873 օգոստոս և սեպտեմբեր ամսոց Մասիսի թերթերը կարդացողները իրաւունք ունին այժմ զարմանալու և ինքնին հարցնելու թէ հապա ինչո՞ւ Մասիս այն ատեն հըրահանգները պատրաստող նախորդ վարչութեան վրայ կատարաբար կը յարձակէր և կըսէր. «անպարտաւերելու» դուք ո՞վ կըլլաք որ ըստ Իմաց հրահանգներ կը շինէք և առանց Ազգ. ժողովին վաւերացնել տալու գործադրութեան կը դնէք. սահմանա-

դրութիւնը գործադրելու պատրուակին տակ հակասահմանադրական ընթացք կը բռնէք և գաւառները տակնուվրայ կընէք և ևն. ևն.

Մի և նոյն ատեն Մասիս կաղաղակէր նաև թէ Հրահանգը սահմանադրութեան հակառակ է. և անոր հակասահմանադրական կարծուած կէտերը զորս իղմիրի ազգայնոց մէկ մասը ցուցնած էր, ինքը կը թուէր և անորոմբար ու անխղճօրէն Հըրահանգաց խմբադիր անդամները կանուանարկէր ու կը վատահամբաւէր անամօթութեամբ ըսելով. «անպարտաւերելու», ինչ հասկցաք, կանոն չինեղը քերականութեան դաս տալ կարծեցիք որ ելաք կանոնադրական անտերբով լեցուցիք Ազգը»:

Ազգ. երբ Ազգ. ժողովոյ որոշումները նոյն ինքն Մասիսի մէջ հրատարակուած կը տեսնեմք այսօր, միթէ չ'աւուրք չունինք մեք ևս Մասիսի ըսելու. «Չորհո՞յ», ո՞ւր մնացին այն խել մը շարաթստութիւնները, զրպարտութիւնները և ըրած նախատինքները. ինչո՞ւ լուռ և պապանձեալ մնացիր»:

Թերեւս ընթերցողք ըսեն թէ Մասիսի խմբագիրը իբր երեսփոխան իր դիտաւորութիւնները Ազգ. ժողովոյ ներկայացուցած և ժողովը մեծամասնութեամբ չէ ընդունած. սակայն այնպէս չէ. Մասիսի երեսփոխան խմբագիր իւր թիւնեան էֆէնտի դիտողութիւն մը չընելէ զատ, մինչև իսկ զի ներքեւ ծածկեց, և միւս ձեւով ալ Իմաց հրահանգները քործադրելի են ինչ հակասահմանադրական չեն:

Մի և նոյն պապանձու մն ունեցաւ Մասիս երբ նախորդ վարչութեան համարատուութիւնն հրատարակուեցաւ, մինչդեռ անկէ առաջ դայթակղութեամբ սնանող իւր թերթին մէջ կը պոռար կը կանչէր թէ նախորդ վարչութիւնը կարեւոր խնդիրները թողլով, մասնաւոր խնդիրներով զբաղած է, թէ 2-3 անձով նիստ ըրեր է, և այլն:

Մի և նոյն պապանձու մն ունեցաւ Մասիս, երբ 4000 ստորագրութեամբ ժողովրդեան հանրագիր ըսուած թուղթը Ազգ. ժողովին դուրս նետուեցաւ առանց և ոչ ի՞նչ քերտիտանքի մը պաշտպանուելու. մինչդեռ Մասիս մինչև այն օր կը ճգնէր և կաշխատէր Ազգին աշխատաւորները 4000 անձանց բողոքին ներքեւ ձգել և անոնց ազգային գործերէն հրատարակել անհրաժեշտ կը համարէր իբր միակ միջոց Ազգին խաղաղութեան:

Ինչ պէտք է թուենք. այսպիսի շատ մը պարագայներու մէջ Մասիս պապանձեալ մնաց, ինչ եղաւ ուրեմն իր բարձրաբարբառ շարաթստութեանց արդիւնքը. — ոչինչ. Ժամանակը երեւան հանց ու խայտառակեց Մասիսի շարաթստ յօդուածոց արժէքը, ինչպէս նաև երեւան հանց յօդուած Ազգին աշխատող անձանց բարձր արժանիքը և անոնց գործերը փառաւորեց ու դուրստեց նոյն իսկ Մասիսի կուսակից կարծուած անձանց վկայութեամբը, որուն վրայ Մասիսի ամօթը տարապայման եղաւ:

Մասիսի շարաթստութեանց և զըրպարտութեանց դատապարտութիւնն արգիլող բան մը միայն կար, այն էր Ազգ. երեսփոխանական ժողովոյ ցըրուումը. անիշխանութիւնը, որով ամեն բան թերեւս մոռացութեան մէջ թաղուէր. այս բանին շատ աշխատեցաւ Մասիս. ամեն ջան և հնարք ի գործ դրաւ. երեսփոխանութիւնը չ'ըստանալ հրատարակեց. 500 ոսկուոյ գանձապետութեամբ սրիկաներ վարձեց, ժողովին դադարեց բըռնաբարեց, ժողովին դադարեց նիստ ընելու իրաւունքն ուրացաւ, ևն. ևն. բայց այս ամենուն մէջ կորակոր և ամօթապարտ եղաւ ինչո՞ւ. — վասընզի իր հալածած խմբակին նշանաբանը անկեղծութիւն ու ազգասիրութիւն էր. մէկ խօսքով ճշմարտութիւն: Այդ խմբակը որ մեծ բանակ մ'էր, մոռցաւ իր անձը և խորտակեց Մասիսի և իւրայնոց ձեւք առած ամեն վատթար միջոցները և յաջողեցաւ փրկել Ազգ. ժողովը որ սահմանադրութեան հոգին է. որոյ շարունակութեամբը ազգն ունեցաւ իր սիրելի Պատրիարքը, վարչութիւնը և շատ մը նոր բարեփոխումներ. ժողովին այս շարունակութեամբը նոյն իսկ այդ հալածեալ անձանց պաշտօնն ու պատիւը արդարեայ, իսկ Մասիս պապանձեցաւ և խայտառակեցաւ:

### ՍԵՂԱՃԱՆԻ ԴԱՏԸ

Մասիս իր շարաթ աւուր թուոյն մէջ Սեղաճեան դատին նկատմամբ դեր. Տ. Խորէն Սրբազանի գրած նամակին վրայ սա խորհրդածութիւնը կընէ.

«Ս. Պատրիարք, Բաղաբական ժողով, արձանագրութիւն ամենն ալ սուտ են և միայն գեր. Խորէն Սրբազան ճշմարիտ է. այս ալ ամեն հաւանականութեանց դէմ է»:

Այս պարբերութեան մէջէն ար-



ձանագրութիւն բառը վերցնել պէտք է. զի ժողովին մը որոշումն ըսել է. և այդ խորէն Սրբազանի դէմ հանեալու չափ կարևորութիւն չունի: Պարզ Ս. Պատրիարքին, Նորին Սրբազանութիւնը այդ որոշումը վերահաստատուել կարծուած օրը կանխեր և Ազգային ժողովին իջած էր, թողունք որ դիւանատան կողմէն պատրաստեալ թուղթը Ս. Պատրիարքին ստորագրութիւնը կրէին չը հետևի թէ Ն. Սրբազանութիւնն ալ խառն ժողովոյ այս կարծեցեալ որոշման վրայ պնդած ըլլայ:

Ուստի պատասխանատուութիւնը ո՛չ թէ Ս. Պատրիարքին, այլ դիւանատան վրայ է, կամ աւելի ճիշդը խօսելով, միապետաբար այսպիսի գիր մը գրել հրամայող Քաղաքական ժողովին վրայ:

Ինչպէս կը տեսնուի, Սրբազանի խնդրոյն մէջ Քաղ. ժողովը մէկ կողմէ կը գտնուի, իսկ կրօնական ժողովը միւս կողմէ: Երբ այս երկու ժողովներն անհամաձայն են խնդրոյ մը որոշման մասին, միթէ այն խնդիրը խառն ժողովոյ որոշումը կրնայ ըլլալ և միթէ միայն Քաղ. ժողովոյ որոշումը չը համարուի:

Գեր. Խորէն Սրբազանի պնդած կէտն ալ ճիշդ այս է: Միւս կողմէն դարմանալի և ցաւալի է տեսնել՝ որ Սրբազանի դատին մէջ քաղաքականը շատ առաջ կուզեն երթալ, մինչդեռ կրօնականը ծանր քայլ առնելու վրայ են: Եւ արդէն ամուսնական ծանր ու փափուկ խնդիր մը որ Ազգին կեանքն ու հոգին է, անսպարանքէ հեռի մանրախոյզ քննութեամբ միայն կարելի է վերջանալ:



Իզմիրեան բարեբարոյ բնտանիքը կիրակի օր դառն և ցաւալի կորուստ մ'ըրաւ:

Իզմիրեան դեր. Տ. Մատթէոս Ծ. վարդապետի մայրը Տիկին Իւզաբեր յետ մշտաջարար երկարատե հիւանդութեան շաբաթ օր իր կեանքը կնքեց ի հասակի 63 ամաց, ի խոր սուգ ընկզմելով իւր սիրասուն գաւակները:

Հետեւեալ օրը կիրակի հանգուցելոյն տիկնոջ թաղման տխուր հանդէսը կատարուեցաւ Գումբափուր Մայր եկեղեցին ի ներկայութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, գեր. Տ. Խորէն, Տ. Սիմօն և Տ. Կարապետ Ա. Արքեպիսկոպոսաց, մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց քարոզիչ դեր. վարդապետաց, 25-30 քահանայաց և բազմաթիւ երևելի ազգայնոց, որոնք հեռաւոր տեղերէ եկած էին իրենց բարեկամին մօրը դադաղին հրաժեշտի ողջոյն տալու համար:

Ս. Պատրիարք Հայրը ազդու դամբանականաւ մը հանգուցելոյն ընտիր բարեմասնութիւնները դրուատեց որ յաջողած էր կիրթ և բանխուժ գաւակներ հասցնելու Ազգին:

«Ասոնց մէջ իթաւամբ կը փայլի, ըսաւ Ն. Սրբազանութիւնը, Տ. Մատթէոս վարդապետ, մեր սիրելին և

բարեկամը որ իր անբաւոր վարուքը և բարուքը, եկեղեցական հմտութեամբ մեր և շատերուն սէրը կը վայելէ իրաւամբ և ամենուն բարեւոյ օրինակ կրնայ հանդիսանալ»:

Այնուհետև սկսաւ յուղարկուորութիւնը և թէպէտ մէկ կողմէն հեղեղանման անձրև կը տեղար, սակայն հանդէսը ամենայն կանոնաբարութեամբ շարունակուելով, եպիսկոպոսներ, վարդապետք և քահանայք եկեղեցական զգեստաւք, երգչիկ դուրք և յուղարկուորաց անթիւ բազմութիւն մը դադաղին շուրջը բոլորելով, մինչև Լանկէն անդին իւր կէտ ժամու ճամբայ ուղեկից եղան, ուր հանդէսը վերջանալով, հանգուցելոյն մարմինը Պալքարի դերձակներու տարուեցաւ և իր ընտանեաց դամբարանին մէջ ամփոփեցաւ:

Գիտեմք որ այսպիսի հարուած մը դառն է և դժոխակ, մանաւանդ Տ. Մատթէոս վարդապետի համար որ յանձնաւ կը սիրէր և կը խնամէր իւր դորովագութեան և հեղահոգի մայրը, և զոր իր միակ միւսիթարութիւնն համարած էր յաշխարհի: Ուստի այսպիսի դժոխակ պարագայի մը մէջ չունենալով բառ մը միւսիթարութեան, յերկնից արիւթիւն և համբերութիւն կը մաղթեմք:

Կտակաց և անտէր որբոց Ժառանգական խնդրոյն յանձնաժողովը շարաթ օր ի Ղալաթիա գումարուելով ընդ նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Հօր, կարևոր և իմաստուն բարեփոխութեանց յաւելուած մ'ըրաւ ծրագրին վրայ և լսեմ: Ապրո Եփէնտի յանձնեց նոյնք աաճ. կերէն լեզուի թարգմանելու համար: Գոհեմք լսելով որ Ս. Պատրիարք Հայրը նոյնք բարձ. Մեծ. Եպարզօսին պիտի ներկայացընէ այսօր:

— Մշտ առաջնորդական Տեղապահ Խորէն վարդապետ Ազգ. վարչութեան ասիէ առաջ զինքը պաշտօնանկ ըրած ըլլալուն որոշումը չը դիտնալ ձեացնելով, այս անգամ հեռագրու հրաժարական խրկեր է ի Պատրիարքարան:

— Այս շաբաթու Բ. Դրնէն ծանուցադիր մը եկաւ յԱզգ. Պատրիարքարան, որուն հետ կցեալ է երկնայի ժողովը կրնան կողմանէ առ կուսակալըն Կարնոյ տրուած հանրագիր մը:

Բ. Դրան Ծանուցադիրը երկնայի առաջնորդ Գեր. Ալեթիքեանի ի Պօլիս կանչուելուն համար չնորհակալութիւն և դժուսակութիւն կը յայտնէ. իսկ ժողովը կրնան հանրադիրը որ Կարնոյ կուսակալին տրուած է, կըսէ թէ Ալեթիքեանի երկնայէն մեկնելուն պէս խաղաղութիւնն ու բարեկարգութիւնը վերահաստատուեր և կալու, յուղմունք վերջացրեն:

Կը փափայէինք որ ժողովը կրնան մէկ մասին այս յայտարարութիւնը ստոյգ, ճշմարիտ, և անկեղծ եղած ըլլար:

— Յաւօք սրտի կը ծանուցանեմք որ Փունջ և թատրոն լրագիրները բարձրատիճան եկեղեցականի մը դէմ գրած ըլլալով, Տպագրական տեսչութեան հրամանաւ առաջինը մէկ ամուսան, իսկ երկրորդը երեք ամուսան համար գաղտնեցան:

— Բերկութեամբ կը ծանուցա-

նեմք որ Ծառիկն անուն զաւելուալեան թերթ մը սկսաւ հրատարակել անցեալ շաբաթ արտօնութեամբ և խմբագրութեամբ Հասնան Յակոբ Եփէնտիի:

Հասնան Եփէնտի արդէն գրական ասպարիզին ծանօթ անձ մ'ըլլալով, կը յուսամք որ արժան եղած Յօդագրութիւնը կը գտնէ ընթերցանող ազգայիններէն:

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Ծոր. Կոս. Բէ. 283)

Արդարեւ կայ և կը մնայ շատ ծնողաց վրայ զաւակ փոփոխութեամբ մը, հարցը արդարեւ անտար Գոյն մը, փեսան քոչարեք և ինչպէս հուշակերտ լիջ մը, մեծ ծախք ընելու հակամիտութիւն մը և հարսանեկան հանդէսին գոհացում մը տալու աշխատանք մը. բայց ասոնք ոչ թէ պարտք մը կատարած ըլլալու, զաւակ մը մարդոց կարգը դաստիարակ և անոր երջանիկ ապագայ մը պատրաստելու, այլ ուրիշներուն նմանելու և նորաձեւութեանց հետեւելու համար է:

Որովհետև ամուսնութիւնը չունի այժմ այն նուիրական նշանակութիւնը, այն կարեւորութիւնը, այն յարգը, այն ազդեցութիւնը, զոր ունէր երբեմն. — Ծնողք՝ իրենց զաւակը կամուսնացնեն անչորս և նկուտ այլ և այլ ենթագորութեանց տակ, երկտասարդ կամ անսանձ, առանց իրենց ընտանեկան կեանքը ապագային համար ապահովելու նպատակով և առ այս աւելի յարմարագոյն նախապատել համարելու, այլ ներկային մէջ մեծ դուրս մը ձեռք անցնելու և ապագային զայն կրկնապատկելու կամ փառք և պատիւ ստանալու յուսով. օրիորդք կը փափային ամուսնանալ ոչ թէ իրենց ապագայ երջանկութիւնն իմաստելով, այլ ամուսնութեան մէջ հաճոյք մը նշմարելուն համար:

Ծնողք և ամուսնացեալք, այսպէս ամուսնութեան բուն ուղին ու նպատակը կորստելով, ամուսնական պարագային մէջ թողլով ամենէն նուրբ և բարոյական կէտերը, իրենց ուշագործութիւնը կը դարձնեն բոլորովն անտեղի կամ տալիք Բարեմաներուն և ճեղքներուն վրայ: Խեղճերը կը կարծեն թէ, առկը կամ առնելիք Բարեմանին որչափ շատ ըլլայ, և ճեղքներն որչափ շեղ ըլլայ, իրենց զաւակաց ապագայ երջանկութիւնն ալ այնչափ ապահով և ընտանեկան կեանքն այնչափ խաղաղ կըլլայ:

Ասոնցմէ զատ, կայ նաև ընդհանրապէս այնպիսի անհետեւիք և այսպիսի նկատում մ'ալ, որ մարդ չկրնար իր զարմանքը բռնել, այն է՝ ամուսնացելուց և կամ նորա ծրնողաց կողմէն հարսնացուին կամ փեսացուին քեզ կամ քեզ տեղէ ըլլալուն փնտռուելը:

Ազնիկ և կամ երկտասարդ մը, որչափ ալ անկիրթ, որչափ ալ չաւայլ և որչափ ալ անբարոյական ըլլայ, դարձեալ հող չէ, բաւական է որ քեզ տեղէ, այսինքն արեւելի արեւելի զաւակ ըլլայ և ոսկի շատ ունենայ. բայց ընդհակառակն, աղջիկ կամ երկտասարդ մը, որչափ ալ բարի, սր-

չափ ալ առաքինի և որչափ ալ առողջ ըլլայ, դարձեալ չկրնար ընդունելի և հաճելի ըլլալ, որովհետև քեզ տեղէ է, որովհետև դործաւոր և աղքատ ընտանիքէ է և ոսկի բնաւ չունի:

Ո՛վ խեղճ արարածներ, մի՛ կարծէք թէ ոսկի շատ ունեցող ամուսնոյ մը տէր ըլլալով միայն կրնաք ձեր ազագոյն երջանկութիւնը հիմնել և ձեր ՊԱՏԻՒԼ ապահովել: Ո՛չ, ո՛չ երբէք, որովհետև, ոսկի շատ ունեցողը յուսահատական պարագային մը մէջ աւելի վտանգաւոր է. և դուք, ոսկուց պահպաններ, աւելի ձեր սրտին սիրահարներն ընտրեցէք ձեզ ամուսին, քան ձեր ոսկուց անտէր՝ որ ձեր ոսկուց համար ձեզ հետ թէ և անյարմար, բայց ամուսնանալ կը յօժարի, աւելի վրտանգաւոր պիտի ըլլան ձեզ, որովհետև, ինչպէս որ ըսած է երեւելի հեղինակ մը, Այն մարդը որ կը կարծէ թէ աշխարհիս վրայ ամեն բան ոսկիով կըլլայ, այն մարդը ոսկի ունենալու համար ամեն պարագային մէջ ամեն բան ընելու տրամադիր է:

Թերևս շատերը առարկին մեզ, թէ ներկայ քաղաքականութիւնը այսպէս կը պահանջէ, քանի որ մարդու մը արժէքը, յարգը, վարկը իրեն ընտրած ամուսնոյն հարուստ կամ քեզ և քեզ տեղէ ըլլալէն կախումն ունի:

Բայց գիտէ՛ք թէ, ձեր ըսած այդքաղաքականութիւնը մեզ գէտի՞ր ո՛ւր կառաջնորդէ. — երկտասարդ կամ օրիորդ մը չպիտի վարանի երբէք անարդ կեանք մը անցընելու, երբ հարուստ է, երբ ոսկի շատ ունի, որովհետև ուղած ատեն պիտի կրնայ իրեն հաճելի ամուսին մը ընտրել. . . . բայց աղքատն ու ոսկի չունեցողն ալ հաճոյքներէ յաղթուելով և իր նկուտ ու անչորս փեճակը նկատելով, պիտի պարտաւորի մերկանալ այն ամեն առաքինութիւններէն, որ իրեն ապագայ մը չը պատրաստէր և իրեն երջանկութիւն մը չընծայէր — հարուստ և աղքատ այսպիսի փեճակ մը մէջ, ինչ կըլլայ այն ատեն մեր ընտանեկան կեանքը և ինչ կըլլալու կուսենայ:

Ընդհանուր անվտանգութիւն:

Որով և ամուսնի կեանքը աւելի նախապատել համարուելով, ինչպէս որ այժմէն սակաւ առ սակաւ ընդունուի սկսած է, պիտի տեսնէք ամուսնաց բազմութիւն մը, որոնք օճի նման ընտանեաց մէջ սողոսկելով, և պատուոյ դէմ սպառնալով, ընկերականութիւնը բողոքովն վրտանգաւոր դերքի մը պիտի վերածեն:


Արդ՝ պէտք է որ ամուսնութիւնը առանց իր նպատակէն չեղելու, հաճելի և միանգամայն անհրաժեշտ պարտաւորութիւն մը ըլլալուն ըսկըղբունք ընդհանրապէս տարածուի ամեն աստիճանի մարդոց դադարին մէջ, որովհետև ամուսնաց թիւը, փոխանակ կրկնապատկուելու, օրի օրի պակսելով, մեր ընտանեկան կեանքը և պատուոյն սպառնացող վտանգը Ժամ յառաջ անհետանայ:

Ահա այս մտտին կատարելապէս կծառայէ մեզ և իմաստասիրութիւն Ամուսնութեան» անուն գործը. ուստի վերջացնելով մեր յօդուածը, կը



յորդորեմը ամեն ամուրիներն, ամուսնացեալներն և ընտանեաց հայրերն, որ այս գործին բաժանորդագրութեան մասնակցելով, իբր կատարեալ դատարարակ ընդունին իրենց ընտանեաց մէջ, որոյ օգտակարութիւնը քիչ ատենուան մէջ տեսնելուն անկասկած եմք:

Կ. Ա. Պարեան



Միևնուէն փոքրուիտի քերտ փոփոքանս, որ Մանուէի 3033 Բէնիքի Եղ. (Շար. Ե. վերջ տես քի. 286)

Նաև կը գրէ թէ « վանքերու և ժառանգաւոր դպրոցներու մէջ եղեալ փոքրիկ տղայ աստիճան տարով ուխտ կը պահանջեն որ իրենց բոլոր կենաց մէջ ամուրի մնան»: Հայաստանեայց Ս. Եկեղեցին այնպիսի անդուլտութիւն մ'երբէք ընդունած չէ, և պիտի չընդունի:

Եթէ վանքերէն, եթէ ժառանգաւորաց և անժառանգաւոր դպրոցներէն և եթէ ո' և իցէ վիճակէ կամ պաշտօնէ ըլլան, բոլոր ուսմունք և քաղաքավարութիւն սորված ըլլան, անմարմին և սուրբ հրեշտակաց վարքն ունենան, Սոդոմոնին չափ ալ իմաստուն ըլլան, դարձեալ ըստ կանոնի սուրբ եկեղեցւոյ իրենց ձեռնադրուելու ժամանակն եպիսկոպոսն ի սուրբ եկեղեցին խուռն բազմութեան մէջ աթոռին վրայ նստելով իրենց ուսմունք, վարք, բարք, առաքինութիւն, պարկեշտութիւն հաւատք և այլն և այլն նոր ի նորոյ մանրամասնաբար կը հարցնէ, և եթէ ժողովրդեան մեջն մէկ մ'ըսելու ըլլայ թէ արժանի չէ, իսկոյն իր քովէն կը վընտէ, և ա' չի ձեռնադրեր, եղածն աքաղաքս տեսած եմ:

Կրէ թէ « Ս. Գրիգոր լուսաւորիչ, իւր որդին վրդանէս կաթողիկոս ամուսնացեալ էին»: Արդարև իրենք Ս. վրդանէսի որդին Ս. Գրիգոր, Ս. Գրիգորի թոռն մեծ Ներսէս, և անոր որդի Ս. Իսահակ Պարթև հայրապետն ամէնն ալ ամուսնացած էին: Բայց որն որ իւր կնոջէն հրաժարելով ինքն հայրապետ և կինն ալ մայրապետ եղան, որուն որ կին մեռաւ, և ապա ձեռնադրուեցաւ:

Ինչո՞ւ համար այնչափ հեռու կերթայ, այսօրուան օրս ալ քիչ ամուսնացեալ վարդապետ, եպիսկոպոս մինչև անգամ կաթողիկոս ալ կան, որոց անուններն յիշել աւելորդ կը համարիմ:

Կը յաւելու թէ քանի մը հարիւր տարի առաջ Եւրոպայի մէջ կուսակրօն կղեր մը հիւանդացիք է եղեր, և հիւանդութեան պատճառն ալ ամուրիութիւն է եղեր, մենք ալ կըրանք. եթէ այնպիսի դէպք մը պատահած է նէ, Եւրոպայի մէջն է պատահեր, և ոչ Հայաստանին, որուն թո՛ղ երթայ Եւրոպացւոց եպիսկոպոսներն ամուսնացնէ, որպէս զի Ազամի ժամանակէն մինչև հիմայ եթէ այնպիսի դէպք մը հոն պատահէր նէ, չըլլայ որ մինչև ի կատարած աշխարհի մէկ մ'ալ պատահի: Ինչպէս որ մենք առանց կրթի մեղմ հանդարտ և հեղութեամբ փորթուղապետի բերած փաստերն անոր կարծիքին անդամար ըլլալը կը հաս-

տատենք, պէտք է որ ինքն ալ եթէ կրնար նէ այնպէս ընէր, և ոչ թէ առանց ուշի ուշով մեր տեսարան կարգալու ընենք խորհելու և մտածելու, ի կրից շարժեալ այն պիտի խօսքեր յառաջ բերեալ գրիչին տակն առնէր որոնք լի են հայհոյութեամբ: Չորօրինակ մեզի համար կը գրէ թէ « կը ջանայ ծիծաղելի փաստերով պաշտպանել կըրդերին ամուրիութիւն, և աշխարհական իշխանութիւն »:

Մեր յորինած տետրակը կարգացողներն արդէն կը յիշեն որ մեր փաստերն ամէնն ալ Ս. Աւետարանէն, սրբոց առաքելոց և մարգարէից գրութիւններէն, վերջապէս ի սուրբ գրոց, ի հին և ի նոր կտակարանացն առած ենք: որոնցմէ նշանակելի մը դիմաց երկինք և երկիրն են: տես Մտթ. Ե. 18: Եւ Ղու. Ժ. 17: Այս ինչ խիղճ է, ինչ խելք ու միտք է, ինչ բանակնութիւն է, որ փրկատուութեան անուն իր վրայ կրելով հոգւոյն սրբոյ պատգամները ծաղրելի համարի: Նաև կը գրէ թէ « բնութիւնը արարչին մատն է: Նա կը ցուցնէ թէ որ ճանապարհէն պէտք է քալել »: Այս խօսքերն ալ տեսէ՛ք թէ որչափ հակառակ են հաւատոց, օրինաց, փրկատուութեան, անձնիշխանութեան նաև հոգեւոր իշխանութեան և քաղաքական կառավարութեան ևս: շատ մարդիկ շատ յանցանք կը գործեն, ոմանք գողութիւն և աւազակութիւն կրնեն, ոմանք մարդասպանութիւն, ոմանք յափշտակութիւն և մատնութիւն, ոմանք պռնկութիւն և արուազխութիւն, և ըն. և ըն. ուրեմն յանցանքը իրենց չէ և կառավարութիւնն ի զո՛ւր զիրենք կը պատժէ, ինչու որ ընող իրենք չեն, այլ ըստ փորթուկանի արարչին մատն է որ անոնց ընել կտայ: Այս ինչ սարսափելի հայհոյութիւն է: արարչին մատն Հոգին սուրբն է, տես Ղու. ԺԱ. 20: Եւ Մտթ. ԺԲ. 28: Տե՛ս նաև Ղուկասու աւետարանի մեկնութեան 200 երեսն:

Բացառութիւն եպիսկոպոսական ամուսնութեան անունով տետրակը դրամաճառաց քովն ալ կան: փափաք ունեցող թո՛ղ առնէ կարգայ, և ուշի ուշով ալ թո՛ղ ընեն, եթէ սուրբ գրոց կամ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և կանոնաց հակառակ բան մը կամ սխալ մը գրտեն նէ, թո՛ղ բողոքեն սրբազան Պատրիարք Հօր և Աղգ. պատկառելի Կրօնական Ժողովոյ, և մենք ալ պատրաստ ենք ի պատասխանատուութիւն, իսկ եթէ կը պաշտպանենք նէ՛ ուրեմն այսպիսի իրենք իրենց դէժխօսող և գրող նաև Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ վարդապետութեան անտեղեակ մանաւանդ թէ հակառակ երկրասարդներուն թո՛ղ մտիկ չընեն:

1876 վետ. 15  
Ի Մայր եկեղեցին

Բարեկէպի Պետրոս Ժորջապետ  
Նախորդ առաջագործ Սէնթրոն

Արշալոյսէն՝

Պատուական բարեկամ ոմն զհետեւեալ աղգային տեղեկութիւնսն հաղորդէ մեզ 'ի Շուշիէ:

Ղարաբաղու բարեկամ Առաջնորդ դերա. Տէր Սարգիս Ս. Արքեպիսկոպոսն Զալալեանց՝ յետ կառուցանելոյ զուսումնարանն և զառաջնորդարանն 'ի Շուշի, նոյնպէս աղգաւորաբար հոգ տարեալ կառուցելու և զառանձին գալորոց վանս օրիորդաց՝ երկարակեան տանն սնեկօք: Սակայն նախարան զժողովել անդ զաշակերտուհիս, փութացաւ տալ վերանորոգել և զվանս սրբոյն Գրիգորիսի՝ որ յԱմարաս, հռչակաւոր ուխտատեղի աշխարհին Աւղանից: Բայց գժրաղդարար այս վերջին շինութիւնն պատճառ եղև հիւանդութեան բաղմալատակ առաջնորդին մերոյ: քանզի Նորին Սրբազնութիւնն անդուշաբար նստելով 'ի վերայ ցուրտ քարանց և կանգուն կալով երբեմն 'ի խոնաւ տեղիս ընդ գործաւորաց՝ ստացաւ զախան ջրացաւութեան և զօգացաւութեան: յորմէ սաստիկ տառապեալ պարտաւոր եղև ըստ խորհրդոյ բժիկաց, երթալ 'ի հանքային ջուրն Արաստու մանու, ուր թէև վանս օգաւփութեան գրեթէ զամիս երիս մնաց, բայց ոչինչ օգուտ քաղելով դնաց անտի 'ի Ս. Եկեղեցիէ՛ն հաստատուն որոշմամբ հրաժարելոյ յԱռաջնորդական պաշտօնէ իւրմէ առ 'ի մեկուսանալ 'ի վանս Սանահնի, որոյ բնիկ միարան է: Սակայն վեհափառ կաթողիկոսն ոչ է կամեցեալ ընդունել զհրաժարական նորա, այլ թող տարով Նորին Սրբազնութեան մնալ 'ի Սանահնի և հոգ տանել զառողջութենէ իւրմէ, հրամայեալ է նմա պահել 'ի վերայ իւր զԱռաջնորդութիւն Ղարաբաղու, և նոյն վիճակի հոգեւորատենին ձեռքը շարունակելով միշտ կարգադրել զգործողութիւնս տեղւոյն, այց առնել երբեմն երբեմն հոգեւոր հօտին իւրոյ: Ուստի դերա. Ջալալեանց սրբազանին հարկ եղեալ է ընտրել 'ի տեղի իւր՝ բանիւնն փոխանորդ մի, այսինքն զարժանապատիւ Գեորգ վարդապետն Սուրենեանց՝ որ ուսումնական եկեղեցական մի է և քաջ տեղեակ ուսուցիչն ընդուի, որ հարկաւոր է յոյժ իւրաքանչիւր պաշտօնական անձի յամենայն դէպս, որպէս և այդ տաճկերէնն:

Ուրախ սրտիւ ծանուցանեմք ձեզ թէ յիշեալ արժա. փոխ-Առաջնորդն արդէն եհաս 'ի քաղաք մեր, ուր իւր քաղցր բնաւորութեամբն և իւր սիրայորդու քարոզութեամբք շահասիրեալ զժողովուրդն՝ ոչ սակաւ միտմարէ զնա հոգեւորապէս: Իսկ Զալալեանց սրբազանն գտանի այժմ 'ի Զալալովի քաղաքն, որ չորս ժամուց ճանապարհաւ բացակայ է 'ի Սանահնէ: Սակայն յսկիզբն ամարան մտադիր է, եթէ Տէր կամեցի, երթալ 'ի Տիփլիս 'ի դարման առողջութեան իւրոյ: Այսու ամենայնիւ Նորին Սրբազնութիւնն առաջի աչաց ունեւորով միշտ զմտաւոր կողմն իւր առ Աստուած, պատրաստեալ է 'ի վանս Սանահնի զգերեզմանատուն իւր, որոյ 'ի վերայ այժմէն տեսնի հետեւեալ արձանագրութիւնն:

Զինչ օգուտ գահոյք պերճ իշխանական, Ձի սա է բաժին մեր վախճանական. Ոյք այսօր 'ի կառս փառօք ճոխանան, վաղիւն իջանեն 'ի խոր գերեզման:

Սարգիս վարդապետ Հայոց Զալալեան,

Սանահնի վանից բնիկ վարան,

Նայեցեալ յունայն մեծութիւն փառաց,

ի կերտել ետու զիմ տապան մահւան:

Ահա՛ այսպէս, դերա. Տ. Սարգիս Զալալեանց բաղմարդիւն Ս. Արքեպիսկոպոսն՝ կանխաւ պատրաստեալ զտուն իւր յաւիտենական, եթէ կամք իցեն Աստուծոյ կենդանի մը՝ նալ տակաւնի մի քանի ամս, ծառայելու սիրելի աղգին իւրոյ անձանունը բար և արդիւնաւոր կերպիւ որպէս ծառայեալ է ցայս քայլ ժամանակի: Իսկ եթէ վերին Նախաննամութիւնն կամեցի առ ինքն կոչել զնա փութով, կամք Տեառն օրհնեալ եղիցի: քանզի մահ ոչ իմացեալ մահ է: Իսկ մահ իմացեալ անմահութիւն է:



Երզնկայէն՝

... Խմբագիր  
Ձեր պատուական լրագրոյն 281 թիւ թերթին մէջ՝ Երզնկայէն գրուած յունվար 1 ամսաթիւ յօդուածին տէրը ոմանք զմեզ կարծելով կը փութամբ այդ սխալ կարծիքն ուղղել:

Ինչպէս որ դուք ալ կրնաք վկայել, աղին բարեկամ, մեք այդպիսի նամակ մը բնաւ դրած չունինք: Ձեզ, և ահա ի հրապարակի կը յայտարարեմք որ այս վերջին պարագային Աւրագանի ի նպատակուրիչ որ և է գրութիւն, մինչև անգամ խօսք մը խօսած չըլլալէ զատ, զինքը չըզող Երզնկայի մեծամասնութեան համաձայն ըլլալու ալ մի քանի պարագայիք յայտնած և մանաւանդ անցելոյն մէջ յիշեալ վարդապետի աղգալուստ ընթացից դէժ բողոքարկու եղած եմ ժամանակին:

Բայց ստանձնած ներկայ փափուկ պաշտօնիս նուիրական պարտաւորութեանս ստիպեալ այս վերջին կողմն չի մասնակցելն աղգին առաւել օգտակար համարած էի: Ուստի մեր վրայ այդպիսի կարծիք ունեցողները կամ կը մարգարէանան, և կամ այդ կերպով մեր գաղափարը 'ի հրապարակ ածել կախորժիւն: Ո՛րն ալ ըլլայ հոգ չէ, մեք գիտեմք մեր սկզբունքը յարգելու պահել, ինչպէս որ կըրնան վկայել զմեզ ի մտոյ ճանչող խոհական անձինք:

20 փետր. 76 Երզնկա Միքիլ Հայտնի



... Խմբագիր

Ասկէք քանի մը ամիս առաջ հրատարակուած Նոր հրոյք է Կոմբուտ տետրակին ներք երեսին մէջ ինքիւր մը կառավարիչ հեղինակ յարգոյ Մ. Բ. Խօջաեանցը և գտնողին 25 ոսկի կը խոստանայ: Բայց կամ մոռացութեամբ կամ յատուկ դիտմամբ լուծուումը ո՛ւր խրկելու է որ խոստացեալ դրամը ստացուի: և ինչ ապահովութիւն կայ այդ գումարը ստանալու: այս մասերուն կատարեալ լուծութիւն կը պահէ: Կուտեմք ատոր պատասխանը տալ: Բայց պէտք է որ յարգոյ հեղինակը այս մութ մնացած մասերուն բացատրութիւն տայ դոնէ լրագրոյդ միջոցաւ թէ մեզ և թէ հետաքրքիր հասարակութեան:



Նամակս յառաջիկայ թերթով հրատարակելիս լինելու վերաբերյալ 1 մարտ 1876 Մնամ. յարգանք Կ. Պոլիս \*\*\*

Հետևեալը Համագրային գործաւորաց ընկերութեան կողմանէ խըրկուած է մեզի հրատարակութիւն :

Մեծագետիւ Ընկեր . Անցեալ ինքուր . 22 թուականաւ երեսփոխանական ժողովոյն գումարման հրաւիրագրերով ձեր մեծագետութիւնն ալ երեսփոխանական քուէ ասացած ըլլալը ծանուցանելու պատիւն ունեցանք :

Բայց ցաւ ի սիրտ կիմացընեմ որ նոյն օրը երեսփոխանաց մեծամասնութիւն չի կազմելով ստիպուեցանք կրկին անդամ երեսփոխանական ժողով գումարել յառաջիկայ մարտ 7 կիրակիէ ի սուրբ Սահակեան վարժարան Սամաթիոյ :

Ուստի վստահ եմ ձեր ընկերութեան ներկայ գտնուելու կը բարեհաճիք :

Որով մնամ ի Դիմաց Ընդհ. Ժող. 27 ինքուր . 1876 Հ. Գործ. Ընկ. Ատենապետ Հ. Մանգուսեան

Ա Ձ Դ

Ա. Տըպէյ գաղղիացի հեղինակին «ՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՄՆՈՒԹեան» անուն գործը, որ երկար ատեն է լինել թարգմանած ըլլալով, սպագորութեան տալու համար պատեհ առթի մը կըստպատէի, վերջապէս, ամուսնութեան խնդրոյն թէ գրական հրատարակին վրայ, և թէ ամեն տեղ կարևորութիւն ստանալը տեսնելով, համարձակեցայ յանձնել սպագորութեան, որուն առաջին թերթը սպագորութեան և հետազննութեան ալ պիտի տպագրուին, այնպէս որ 350 երեսներէ բաղկանալիք այս գործը կարճ միջոցի մը մէջ աւարտի :

Բայց սպագորութեան ծանր ծախքը սակաւ ինչ թեթեւցնելու նպատակաւ, բաժանորդագրութեան մ'ալ ձեռնարկած եմք, վստահ ըլլալով որ գրասէր ազգայինք այս մասին իրենց օժանդակութիւնը չպիտի զլանան մեզ :

Մէկ օրինակին բաժանորդագրելն է երեք քառթ մէջիտ . — Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլիս, Բիզանտինական Սամուէլ Էֆենտի Պարաղազանեանի տպարանը :

1876 Փետրուար 26

Մեծագետ Ս. Քաթանեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դրան Տպագրական դիւանն հետևեալ ազգը շրկած է մեզի հրատարակութիւն :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՁԴ

Մայրաքաղաքիս մէջ հրատարակուած լրագրներէն ոմանք իրենց վերաբերեալ ազգին եկեղեցական պաշտօնէից դէմ թ'չնամանայից յօդուածներ կը հրատարակեն, որովք ազգայնոց կրօնական զգացումները կը վերաուորեն :

Կայսերական կառավարութիւնը վերջին աստիճան կը յարգէ կրօնա-

կան ազատութեան արդար օրէնքը, և չլինար ներել այսպիսի յարձակութեան հրատարակութիւններ :

Հետևաբար այսուհետև այնպիսի հրատարակութիւնները բոլորովին արգիւնել են . և հակառակ պաշտօնական հրամանիս եկեղեցականաց դէմ սանձարձակ լեղուաւ խօսող ընդագործները մշտնջենաւոր դադարման ենթակայ պիտի ըլլան :

— ձեւթնութեան փաշայի Անդրիանուս պոլիս մտնելու հանգիստը շատ փառաւոր եղեր է : Երբ շոգեկառքը կայարան հասեր է, նախկին կուսակալ Խուրշիտ փաշա քաղաքական և զինուորական պաշտօնէացիք, հպառակ դիտարկեցաւ իր և ժողովրդեան խուռն բազմութիւն մը գլխավորեր են զինքը և այնպէս հանդիսի գիշերուան ժամը երկու ժին քաղաք մտեր են :

— Ամերիկայէն երեք նաւ հասանցեալ շարթու մայրաքաղաքս, որոնք Մարթին Էնթէ հրացաններ բերելով, Թօմասնէ փոխադրուեցան :

— Արդարութեան պաշտօնատան առաջին քարտուզար Բէուֆ պէյ ուրբաթ գիշեր յանկարծամահ եղաւ :

— Տաճկաստանի և Յունաստանի մէջ նաւարկութեան և վաճառականութեան դաշնագիր մը կնքելու համար մայրաքաղաքիս Հելլենական դեսպանը Բ. Դրան հետ բանակցութեան մտած է, կրտէ Աթէնքի լրագրներէն մին :

— Ազդիտէ ընկերութեան Մէրսին անուն շոգեխաւք կիրակի օր մայրաքաղաքս հասաւ Սամուէլ Բէուֆ զօրաց առաջին վաշտն ունենալով իր հետ :

— Կայսերական կառավարութիւնը գիշեր, քաղաքի, չամիչի և օղիի տրոց վերաբերեալ նոր օրէնք մը գրած է կըսուի :

— Նիւորթօն անուն շոգեխաւք Բէուֆ զօրաց մաս մը Բլէք տանելու համար ուրբաթ իրիկուն մայրաքաղաքէս ճամբայ ելաւ :

— Սապահ լրագիրը կրտէ թէ արքունի Բժշկական դպրոցի Ծրագրի դաստի աշակերտք իրենց քննութիւնները քանի մը օրուան մէջ աւարտելով, Նիչ, Նօվի-Պազար և Հէրսէք պիտի խրկուին :

— Կիւլիսանէի շէնքը Բժշկական դպրոցի աշակերտաց նեղ գալով, զայն ընդարձակելու որոշում տրուել է :

— Սէլանիկի մէջ Պուլլար մը հըրէի մը խանութն երթալով գանակ մը գնելու համար, սակարկութիւնը բաժ միջոցին յանկարծ առանց պատճառի վրան գտնուած գանակը կը հանէ և հրէին կռնակը կը մտէ, որ անմիջապէս կը մեռնի : Պուլլարը փախելու ատեն ճամբան իրեն հանդիպողները կը վիրաւորէ և երեք հոգի ևս կսպաննէ : Բայց վերջապէս բռնուելով, կը հարցարնուի և կը յայտարարէ թէ այս սպանութեան պատճառը հրէան եղած է : Ի՞նչը թէ նա և իւր գրացիները Պուլլարը ծագրելու և հրէանու ցոյցերը ըրեր են, հետևաբար ինքն ալ վրէժը լուծեր է : Իսկ միւս երեքին համար կրտէ թէ ինքը այդպիսի բան մը չըլելէր : Իշխանութիւնը սպաննելը բանտարկել է :

Table with 4 columns: Item Name, Unit, Quantity, Price. Includes items like Անգղ. վրա, Նարթնոն ոսկի, Իմպէրիալ ոսու, Գըրբից, Ծրանք, Սօֆօրին, ձերմակ մէջիտի տարբերութիւն, Հինգնոց տարբերութիւն, Գարպօն արծաթ, Թիթարթամ, Պղինձ.

Մեր գաւառաւորնակ գործակալներէն մէկ երկու հոգի լրագրոյս բաժանորդագրիները կողորդին անցուցած ըլլալով, կը հրաւիրուին այնպիսիները գրասեղան առ մեզ խրկելու . եթէ ո՛չ պիտի պարտաւորիմք անուննին մի քստ միջէ հրատարակելու :

Պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է իրեն դիմող հիւանդները դարմանել, ամէն երեքշաբթի և շաբաթ, ժամը 8-10 Սուլթան Ահմէտ տիվան ետուր Մ. Ժորժ Խաննի գիտիտի գեղարանը թիւ 128:

Ղալաթիա Սէլանիկ խանը Ն. Տ վաճառական մը աղուոր Սէլանիկի գիտիտի Սէլանիկի մասալքա կը ծախէ ատման գնով . առնել ուղղողները գոհ կըլլան :

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՊԱՍՏԱՊԵՏ ՍԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆԵ և ՀՅՆԻ ՌԵՊՆԱՆ ԳՐԱՊՈՒՆԻՆ ԲՆՈՒՆՆԵՐ ԱՆԿԱՆՈՒՆԵՐՈՅ ՄԻՆԵՐ ԶԵՆԻՆՆԵՐ ԿԵԳՐՈՒՆԱՏԵՂԻՆ Է Զարդարեան գործարան Սուլթան Համաթ թիւ 14 և բոլոր Հայ գրավաճառաց քով . Գին 5 զր:

ՊԱՆԴՈՒՆՔ ՎԱՆՅԵՆ ՆԱՄԱԿՆԵՐ, ԵՐԿԵՐ, ԱՌԱՄՆԵՐ ԱՌԵՎՈՒՄԻՆԵՐ Գրեց Արիստակէս վարդապետ Տ. Սարգսեց

Սոյն գիրքը որուն մէջ կը պարունակին վասպուրական աշխարհի երգերը, վանայ բարբառով նամակներ և հաներուկներ, պանդուխտ ազգայնոց և բանասիրաց ուշադրութեանը արժանի է :

Գինն է մէկ քառորդ արծաթ մէճիտ . կը ծախուի Մէրճան Պաղտասար աշխարհ խանութի և ուրիշ տեղեր :

Է.Լ.Ի. Պ.Ի. ՃԼՏԻՏ Գրեաց Մ'երեւ կե-ւնեմ Ծանկերէնի այբուբէնը ուսանիլ ուղղողներու համար գիրուսոյց քերական մ'է :

Կը ծախուի Սրապեան Պաղտասար աշխարհ խանութի . Գին 100 վր :

ՈՒՍՈՒՄՆ ՀԱՄԱԲԱՐՐԱՌՈՒՄՆԱՆ ՏԵՍՏՈՒՆ ՄԵՐՈՑ

Ի Տ. ՆԵՐՏՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍ ԶԱՐԺԱՊԵՏԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԷ ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՑ

Սոյն ընտիր գործը՝ որ է չորից Ս. Աւետարանչաց համաձայնութիւնն ու անոնց բացատրութիւններն աշխարհիկ լեզուաւ գրուած՝ կը նուիրէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ զաւակաց Ամն. Տ. Տ. Ներսէս Սրբաշան Արքեպիսկոպոսն վարժապետեան, արդի Պատրիարքն Կ. Պոլսոյ :

Գրաբաւ մայրենի լեզուն պատճառ բռնելով Ս. Աւետարանի կենարար վարդապետութեանց լոյս վայելելու շնորհէն շուրկ մնալ կարծուած ազգայնոց համար առաջին կարգի օգտակար այս գործը՝ որ թէ Ս. Աւետարանի աշխարհաբաւ թարգմանութիւնն ու թէ անոր ողջամիտ մեկնութիւնը միանգամայն իւր մէջը կը պարունակէ՝ կրնայ շահաւոր ըլլալ ամեն կարգի ազգայնոց, քահանայից և ժողովրդոց, զոր եթէ ուսանելու աշխատութեանն չը խուսափին՝ մայրամիտ ազանդաւորաց բարանջմանց տեղի չլին տար իւրեանց միտքերը պղտորելու :

Եկեղեցւոյ Հայրապետի մը վայելուչ սոյն Հեղինակութիւնը՝ զՍրբազան Պատրիարք Հայրն արգէն իւր անուանակից Հայրապետաց կարգին կարծանացունէ, որովհետեւ թէ բանիւ և թէ գրով և թէ գործով Աստուծոյ եկեղեցւոյն շնորհեան գործին աշխատած ըլլալու վկայութիւնն առած և երանելի Հայրապետի տիտղոսն իրաւամբ կը ժառանգէ :

Սոյն հեղինակութիւնը Արմաշու վանուց սպարանէն իւր կընծայի ութամիջակ գիրքով և կը բաղկանայ 769 երեսէ՝ մաքուր թղթի վրայ տպագրուելով վաճառման կեցրոնատեղին է ի Կ. Պոլիս Գալաֆեան գրատունը, զին մէկ արծաթ մէճիտ . գործին առատութեան հետ բաղդատելով գինը խիստ ատան և զոյացած արգիւնքն ալ քստ որոշման Սրբազան հեղինակին պիտի գործածուի յօգուտ նոյն վանուց գիշերութեայ վարժարանին :

Գաւառաց մէջ Հայերէնի և Տաճկերէնի չափաւոր աստականաւ դասատուութիւն ընելու պատրաստ մէկ կը կայ :

Ուղղը լրագրոյս տնօրէնութեան պէտք է գիտէ :

Ա Ձ Դ Լրագիրս ձեռքէ կը ծախուի կամուրջին գրուել պարագան, սուսի Պ. Պողոսին խանութի և կամուրջին վրայ լրագրավաճառներու քով :

ՏՆՈ-ԽՄՐ. ՏԵՐ ՄԵՆԸ ՄԵՆԸ Ս. ՎԱՐՈՒՆԵԱՆ ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՏՐԻԱՐԿԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիզանտինական խան քիւ 3